

28.12.2020թ.

16:00

Մասնակցում էին Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Ա.Սաֆյան, Ն.Բաղդասարյան (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար)
Հրավիրված էին Ն.Մուշեղյան, Ա.Գրիգորյան, Գ.Անանյան, Լ.Մարկոսյան

Օրակարգի նախագծում հինգ հարց.

Նիստն անցկացվել է հետևյալով:

1. «2021 թվականի վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Մուշեղյան/

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2019 թվականի փետրվարի 19-ի թիվ 07-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու», «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2018 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 64-Ն, 2019 թվականի փետրվարի 19-ի թիվ 05-Ն, թիվ 08-Ն, թիվ 09-Ն, 2019 թվականի մայիսի 24-ի թիվ 31-Ն որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Գ.Անանյան/

3. ««Հետքուհական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների գործունեության մասին» Ձև 4-զմ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 84-Ն, ««Գիշերօթիկ հաստատությունների գործունեության մասին» Ձև 1-գիշերօթիկ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2015 թվականի հունիսի 25-ի թիվ 09-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 34-Ն, ««Տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպությունների գործունեության մասին» Ձև 1-սոցսպաս (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 94 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 46-Ն որոշումների նախագծերը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Գրիգորյան/

4. «2021 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում տնային տնտեսություններում իրականացվելիք կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթն ու ընթացիկ ծախսերի, սպառման և եկամուտների օրագիրը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/

5. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «2021 թվականի վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Մուշեղյան/

Որոշեցին՝

հաստատել «2021 թվականի վիճակագրական ծրագիրը»՝ համաձայն հավելվածի:

/Նորմատիվ/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2019 թվականի փետրվարի 19-ի թիվ 07-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու», «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2018 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 64-Ն, 2019 թվականի փետրվարի 19-ի թիվ 05-Ն, թիվ 08-Ն, թիվ 09-Ն, 2019 թվականի մայիսի 24-ի թիվ 31-Ն որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Գ.Անանյան/

Որոշեցին՝

հաստատել որոշումները համաձայն ներկայացված նախագծերի

/Նորմատիվ/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

3. ««Հետքուհական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների գործունեության մասին» Ձև 4-գմ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 84-Ն, ««Գիշերօթիկ հաստատությունների գործունեության մասին» Ձև 1-գիշերօթիկ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2015 թվականի հունիսի 25-ի թիվ 09-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 34-Ն, ««Տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպությունների գործունեության մասին» Ձև 1-սոցապաս (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 94 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 46-Ն որոշումների նախագծերը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Գրիգորյան/

Որոշեցին՝

հաստատել որոշումները համաձայն ներկայացված նախագծերի:

/Նորմատիվ/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

4. «2021 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում տնային տնտեսություններում իրականացվելիք կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթն ու ընթացիկ ծախսերի, սպառման և եկամուտների օրագիրը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/

Որոշեցին՝

հաստատել 2021 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում տնային տնտեսություններում իրականացվելիք կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթն ու ընթացիկ ծախսերի, սպառման և եկամուտների օրագիրը՝ համաձայն հավելվածի:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ